

ՍԵՅԼԱՆ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ*

Հայ ժողովուրդը գոյատևման համար հարկադրված է եղել մշտապես ուղիներ որոնել: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ պայքարն ընդունել է պարբերական զինված բնույթ: Այս ամենն ի վերջո ձևավորեց ֆիդայական շարժումը, որի նպատակը դառնալու էր համաժողովրդական պայքարը: Բայց հենց ֆիդայիների մեջ կային մարդիկ, ովքեր համոզված էին, թե ժողովրդի համար երկիրն ազատագրելու են իրենք, իսկ վերջինս պարտավոր է պահել իրենց: Իհարկե, այդպես երբեք չի լինում: Մենք չհասանք մեր նպատակին: Տեղային կռիվները մաշեցին փոքրաթիվ խմբերը: Այսուհանդերձ կային անհատներ, ովքեր համոզված էին, որ անխուսափելի բախումից առաջ հարկ էր նախապատրաստել ժողովրդին: Դրանք բացառիկ մտավորականներ էին, ովքեր անտեսելով ամեն կարգի վտանգ, զնացին «առյուծների բույնը»՝ Սասուն՝ համատարած խավարի մեջ թաղված ժողովրդին կրթելու, դաստիարակելու, նախապատրաստելու համար: Ձևավորվել էր մի սերունդ, որ հոգեբանորեն հեռու էր հայրերի՝ ոսոխից հանդեպ ունեցած վախից ու թուրքի անունը լսելիս էության մեջ ծավալվող դողից: Նրանք քիչ էին, բայց կային: Նրանցից մեկը Սեյլանն է՝ ժամանակի անխոնջ մտավորականը, որ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելուց և Վենետիկում կատարելագործվելուց հետո ողջ կյանքում մնաց որպես գործուն մանկավարժ, բարձր մտավորական ու բռնակալության դեմ մաքառող մարտիկ: Ծնվել է Ախալքալակում:

15 տարվա ընթացքում շրջել է Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի հայաշատ քաղաքներում ու գյուղերում: Սասունի գյուղերում հիմնել է ուսումնարաններ: Նրա աշակերտներից շատերն ընկան ինքնուրունականների շարժման ժամանակ: Սեյլանը Սասունում զբաղվել է ոչ միայն կրթական գործու-

նեությանը, ազգային խնդիրներով, այլև բանահավաքչությանը, ժողովրդի պատմության, գրականությանը վերաբերող նյութերի հայթայթումով:

Ծանր իրադրության մեջ անգամ, քաղաքական հալածանքներն ու աստանդական կյանքը չկասեցրին նրա ստեղծագործական մղումը: 1886-1896 թվականներին գրվեցին «Սասունը», «Գորպե» վիպակը, «Ֆերիտե» վեպը, «Խան-Սիրան», «Բախտի մէկ խաղը» վիպակները, ապա «Սև ասպետ», «Ալմօ», «Ծովահեն» վեպերը, որ անհետացել են ժամանակի անտակ օվկիանոս: 1895-ին «Մուրճի» խմբագրություն է ուղարկում Սասունի՝ իր պատրաստած քարտեզը: Դրա ճակատագիրը ևս անհայտ է: «Սասունը» 1887-ից մինչև 1893-ը թաղված է մնացել գետնի տակ, այս գործի առիթով նա շատ է հալածվել: Իր սուղ ժամանակն օգտագործել է բանահավաքչական, ազգագրական, մեր պատմությանն ու գրականությանը վերաբերող նյութերի հայթայթումով: Երկրի որ անկյունում էլ հայտնվել է Սեյլանը, մշտապես օգնել է մարդկանց, ուսուցանել ու ոգևորել: Նա երբեք չի կորցրել լավ օրվա, ազատ կյանքով ապրելու հույսը:

Այսուհանդերձ մեզ համար Սեյլանի ստեղծագործությունները կարևորվում են մեկ այլ առումով: Անկասկած, մեր միտքը կենտրոնամալու է այս անհատի ստեղծագործական պրպտումներին, քանի որ դրանք բնույթով ինքնատիպ են: Սեյլանի գործերը հայ գրականության վրա անհրաժեշտ ազդեցությունը չեն ունեցել հենց թեկուզ այն պատճառով, որ դրանք հայտնի չեն եղել հանրությանը: Գործերից մեկը տպագրվել է գրվելուց հարյուր տարի անց միայն: Այսուհանդերձ Սեյլանն անկրկնելի է: Մեր պատմության և ընդհանրապես մշակույթի պատմության ճգնաժամը պայմանավորված է պատմական փաստի և դրա մասին եղած կարծիքի, վերաբերմունքի միջև եղած անջրպետով: Պատմական փաստն ինքնին առկա է իր բնույթով, իսկ դրա մասին եղած գիտական պատկերացումները միանգամայն այլ են: Մեզ թվում է, թե ամեն ինչ գիտենք Արևմտյան Հայաստանի մասին: Այնքան շատ է գրվել Սասունի մասին: Բայց իրականում բացակայում է պատմական փաստի և դրա մասին գոյություն ունեցող վերաբերմունքի միասնությունը: **Մասնակցային ներկայությունը** պատմական իրադարձություններին Սեյլանի Սասունականի բացառիկ որակն է: Այստեղ է, որ Սեյլանի գործերն անփոխարինելի են: Նա երևույթները, Սասունը, նրա մարդկանց, սովորությունները, կենցաղը, տեսել է ներսից: Իր ասելիքը ճշտել է դեպքերին մասնակից մարդկանց խոսքով, նրանց հետ ունեցած հանդիպումներով: Նրա գրած գործերն արժանահավատ են այս իմաստով: 1886 թվականին, երբ ոտք դրեց Սասուն, նկատի ունենալով այս աշ-

խարհի մասին եղած տեղեկությունների սղությունը, սկսեց հավաքել նյութերն ու ուսումնասիրել: Նա սկզբից ևեթ իր վերաբերմունքով, ձեռնարկած գործի հանդեպ ունեցած պատասխանատվությամբ տարբերվում էր նրանցից, ովքեր նախընտրում էին խոսել մի աշխարհի մասին, որ չէին տեսել ու կարող էին խոսել ոչ իրական «փաստերով»: 1877-78 թթ. Սան-Ստեֆանոյից և Բեռլինի վեհաժողովից հետո մեծ էր հետաքրքրությունը Հայկական հարցի հանդեպ: Անհրաժեշտ էր ստույգ փաստերով ներկայացնել հայոց երկիրն օտարներին, նաև մեզ: Սեյլանը ոչ միայն ականատես-վավերագիր գրող էր, այլ նաև Սասունի պատմությունն ուսումնասիրող մտավորական, որ հետևողականորեն զնաց դեպի նպատակը՝ անհայտության խորքերից պեղելով կորչող աշխարհի պատմությունը: Նրա համար կարևոր սկզբնաղբյուր էր Օհան եպիսկոպոսի հեղինակած 1300-1600 թվականների Սասունի պատմությունը: Իսկ թե որտե՞ղ է ապրել Օհանը, ո՞վ է նա, ոչինչ հայտնի չէ: Սեյլանը փաստորեն անմահացրել է այս հեղինակին՝ նրան փրկելով անհայտությունից, իսկ ամենից ավելի փրկելով Սասունի պատմությունը՝ մեզ, հետմորդներին համար:

«Սասուն» եռագրության երրորդ մասը «Ֆերիտ» ծավալուն վեպն էր: Այստեղ դեպքերն ընդգրկում են 1880-1890-ականները, դրա համար ընդհանուր ֆոն էր ողջ «Տաճկա-Հայաստանը իր բոլոր նշանավոր վայրերով ու բոլոր հայտնի գործիչներով, ուր պատկերված է սասնեցու և մյուս գավառների առումին կյանքը»: Ստեղծագործության մեջ ներկայացված էին իր ընկերների հեղափոխական գործունեությունը, ուր նաև ինքն ուներ իր համեստ տեղը:

Այս ժամանակահատվածի վերաբերյալ շատ են տեղեկությունները: Գեղարվեստական առումով թերևս ամբողջականը Ղաշտենցի «Ռանչպարների կանչն» է: Գրողի համար կարևոր ազդակ է հանդիսացել Ռուբենի «Հայ հեղափոխականի հիշատակարանը»: Նույնիսկ առանձին հատվածներ կրում են այս երկի ազդեցությունը, Ղաշտենցը չհասցրեց ամբողջությամբ մշակել երկը: Քիչ չեն և վրիպումները, տեղանունների ու անձնանունների անճշտությունը: Մինչդեռ Սեյլանի երկն այս իմաստով դառնում է բացառիկ: Այստեղ տեսանելի են Արևմտյան Հայաստանը իր բոլոր նշանավոր վայրերով ու հայտնի գործիչներով, հարուստ միջադեպերով, որոնք շատ կողմերով նորովի են բացահայտում համիդյան բռնապետության էությունն ու իր ազատության համար պայքարող սասունցու ներքին խոյանքը, նպատակին հասնելու մղումը: Այնքան մեծ էր մեզ համար ճակատագրական դարձած ժամանակաշրջանի մասին ասվող խոսքի արժեքը, որ Սեյլանն այն վերակենդանացրեց մոտ հինգ հարյուր էջանոց վեպի մեջ: Ժանրի ընտրությունը նրան հնարավորություն տվեց, որքան

հնարավոր է, ընդգրկուն կերպով ներկայացնել իրադարձությունները, կենցաղը, մարդկանց: Երևույթները գերազանցապես ներկայացվում են ականատես-մասնակցի հայացքով: Պատմական ատաղձ ունեցող երկերում նա բազմաթիվ ճշգրտումներ է իրականացրել, հաշվի է առել բազմաթիվ թեր և դեմ կարծիքները: Ցավալի է, որ «Ֆերիտե» վեպը 1927-ից հետո անհայտ կորել է, որ նրա Ներսիսյան դպրոցի աշակերտներից Մանուկ Ղազարյանը համարել է «հազվագյուտ գրական գործ»: «Սեյլանի կյանքն ու ստեղծագործությունը» մենագրության հեղինակ Զակոբ Պետրոսյանը հույս է հայտնում, որ վեպը այլ ձեռագրերի հետ կարող է ի հայտ գալ:

«Սասունում» նրան հետաքրքրել է պետականության անկումից հետո նախարարական տների անկման ընթացքը: Ըստ Օհան Եպիսկոպոսի ձեռագրի՝ ռշկոնցիք ռշտունցիներն են, մանգցիք՝ Մամիկոնյանները, սլիվանցիք՝ Սլկունիները, բագրանցիք՝ Բագրատունիները, խորամանցիք՝ Խորխոռունիները: Խորամանցիք, որ բռնել են Սասունի հարավ-արևմուտքը, խոստովանում են, որ հայեր են, սրանք 1870-ին հայանալ, բայց կառավարությունն արգելեց: Բագրանցի քրդերը նույնպես ընդունում են իրենց հայկական ծագումը: Մինչև 16-րդ դարի կեսերը նախարարներն իրենց կալվածքներում գոյություն ունեին իբրև բեյեր: Զետաքրքիր են մեծ տոհմերի առանձին ներկայացուցիչների հետ հանդիպումները, դրանց հետ Սեյլանի զրույցները: Օսմանյան 600-ամյա տիրապետությունը քայքայեց «հայ քաղաքակրթության բարձրագույն շենքը», ժողովրդի մի մասը ժառանգեց ուրիշների նսեն բարքերը, ներծուլվեց մահմեդական ծովի մեջ: Բայց ազգի միջուկը չաղճատվեց, շարունակեց հերկել հողը: Սեյլանը հպարտությամբ ու սիրով է գրել երևելի գերդաստաններից մեկի՝ Զոլոյանների մասին: Զոլոն, որ 120 տարի ապրեց, մահանալիս իշխանությունը հանձնեց անդրանիկ որդուն՝ Գորգեին և պատվիրեց. «Մի՛ խաբվիր սուտ խոստումներից, արյան տեղ արյուն թափելով փառավորիր այն սերունդը, որի իշխանն ու մեծն ես»:

Սեյլանը գրում է և «Գորպե» վեպը, որ պատմում է հռչակավոր Գորգեի հերոսական գործերի մասին: Նրանից հետո գյուղը կառավարել է ավագ որդին՝ Մարտոն, որին փոխարինել է Զամբարծումը՝ միր Զեպոն, որ հիշվում է «կարծուկ, կրակ ու բոց սասնիկ»: Կռիվներից հետո գաղթեց Շատախ, հիմնեց Գելիզուզան գյուղը: Սեյլանի երկը հերոսական ասք է՝ Սասնա հերոսների մասին, որոնք մեզ համար թաղված են մնացել անհայտության մեջ: Դրանք առասպելական են թվում իրենց գործունեությամբ՝ Սատո, Ավե, Փալե և ուրիշներ: Անհնար է ներկայացնել այն ամենը, ինչ ներկայացրել է գրող-պատմաբանը: Սա ավելի տարածաշրջանը ներկայացնող հանրագիտարանային նշա-

նակություն ունեցող երկ է, որ երբեք չի կորցնելու իր արժեքը հենց միայն այն պատճառով, որ փաստերն ու պատմությունները ներկայացվում են առաջին անգամ, այն դառնում է սկզբնաղբյուր Սասունի հերոսական պատմության: Այն հետևողականությունը, որ դրսևորել է Սեյլանը՝ խոսել ամեն ինչի մասին, ներկայացնել գյուղերը, մարդկանց, կենցաղը, ավանդությունները, ամեն ինչ, կարող է համեմատվել միայն Մնծուրու հետևողականության հետ: Չկա ո՛չ Մնծուրու, ո՛չ էլ Սեյլանի ներկայացրած աշխարհը: Բայց դրանք սիրով, գուրգուրանքով, իմացությամբ մեկընդմիջտ արձանագրված են մեր գրականության մեջ Մնծուրու և Սեյլանի գրչով: Ինչպես երկրի դաշտերի ու սարերի տեղ դաշտապահը չի շփոթի լեռների ու ձորերի հատակներում կորչող ճանապարհներն ու դաշտերը, գետերն ու գյուղերը, դրանց արահետներն ու թաղերն իրար կապող ուղիները, այնպես էլ Մնծուրին, այնպես էլ Սեյլանը մեզ համար կենդանի պատկերներով քարտեզագրել են մեր հայրենիքի արահետները, գյուղերը, սարերը, մարդկանց, որ չկորցնենք տունդարձի ճանապարհը:

Սեյլանը փրկել է Սասունի 300-400 տարվա պատմությունը: Այս ամենն անփոխարինելի աղբյուր է Սասունի հավաստի պատմությունը վերականգնելու համար:

«Գորպե» տպագրվեց 103 տարի հետո՝ 1990-ին՝ թոռան՝ պրոֆեսոր Արշակ Մադոյանի ջանքերով: Սեյլանն ստեղծում է պատմական այս հերոսի առասպելական քաջության, նրա հայրենասեր վարքի, գործունեության և նահատակության պատմությունը՝ գերանցապես հիմնվելով իրական փաստերի ու տեղեկությունների վրա:

Ահա թե ինչպես է Սեյլանը ներկայացնում հերոսի մուտքը Մուշ: Դա յուրօրինակ ուժի, արժանապատիվ կեցվածքի, հպարտության ցուցադրություն է: Հերոսի և մարդկանց միջև փոխադարձ սիրո և պատասխանատվության անխզելի կապ գոյություն ունի, որ չի փոխարինվի որևէ բանով:

«Ընտիր ոսկեծոպ, գեսավոր դեզեքին հագին, թարապուլուզ գոտին զենքերով ուռած, թուրն ազդրի վրա տարուբերելով, երկայնափող հրացանը ուսին, որի վրա տարածված են քաջին բաց, հողանի, կայտառ՝ մկանուտ թևերը: Գլխի սև ապարոշի ոսկեթել ծոպերը ծածանվում են շեկ մազերի փնջին հետ, որ անփութորեն թափված է երկար, սիրուն վզովը:

Նորա հայացքը լցված է ազդու ոգևորությամբ, որ հոմանիշ է վսեմ բարկության կամ հաստատուն որոշման: Նա վեհ կերպով մտավ Մուշ: Կին ու մանուկ, երիտասարդ ու ծեր գլուխները շարժելով, հառաչելով նայում էին քաջին: Շատախու գորավարին, որի անունով երգվում էր Մուշ, մանուկներին օրինակ ցուցանում Սասուն:

-Գորգե՛, ե՛տ դարձիր,- շշնջում էին պատահող հայորդիք:

-Մի երկնչիք,- սիրուն ժպիտով պատասխանում էր նա,- թողեք մի քիչ զբաղեցնեն» (Սեյլան, Սասուն, Երևան, 1990, էջ 222-223):

Այս երկի շարունակությունը կարելի է համարել «Շամիրո կամ 1894 թվականի Սասունի պատերազմը» դրամատուրգիական երկը, որից պահպանվել է մեկ գործողություն: Ենթադրելի է, որ այստեղ ներկայացվելու էր Գորգե-Գորպիի առասպելական չարչարանքները: Այս հերոսն առժամանակ Սասունը փրկելու ակնկալիքով հանձնվեց իշխանություններին և անասելի չարչարանքների ենթարկվելով՝ նահատակվեց: Ըստ երևույթին ի հայտ էր գալու մոր հերոս՝ Շամիրոն:

Սեյլանը, որ ուշադիր էր ժողովրդական բանավոր ստեղծագործության նկատմամբ, բավականաչափ նյութեր է հավաքել, հայտնի են մամուլում տպագրված «Հայթա-Ֆիրատ», «Խան-Միրան», «Լեօն կայսր» ավանդավեպերը, վերջինը տպագրվել է 1898-ին՝ «Աղբյուր» մանկական ամսագրում և ժամանակին մտել է դպրոցական ընթերցանության ծրագրերի մեջ:

«Հայթա-Ֆիրատ» վիպակում գրողը քննել է դավաճանափոխ մարդու ողբերգությունը: Կարելի է ասել, որ երևույթը ներսից քննելու Սեյլանի համարձակ փորձը նրա գրական ձեռքբերումներից է:

Սեյլանի մանրապատումները ևս վերաբերում են Սասունի հերոսներին, նրանց անընկճելի վարքին, մարդկային վսեմ նկարագրին:

Դեռ երիտասարդության տարիներից նա սերտ կապեր է ունեցել ժամանակի երևելի գործիչների հետ՝ Մաթեոս Մամուրյան, Մկրտիչ Խրիմյան, Գրիգոր Չիլիմկիրյան, Արամ Արամյան, Հակոբ Պարոնյան, Գալուստ Տեր-Մկրտչյան, Ստեփան Լիսիցյան, Տիգրան Նազարյան և ուրիշներ: Այս ամենի արդյունքում էլ ստեղծվել են դիմանկարների շարքը:

Անգնահատելի արժեք ունի գրողի «Տաճկա-Հայաստանի ազգաբնակությունները» հոդվածը, որտեղ երևում է հայրենասեր մտավորականի իմացության բարձր աստիճանն ու երևույթների խորքը թափանցելու հմտությունը: Նրա եզրահանգումները հենվում են որոշակի փաստական նյութի, տրամաբանորեն կուռ վերլուծությունների հիմքի վրա: Թուրքական կառավարությունն այլ ժողովուրդների, մասնավորապես հայերի քանակը նվազեցնելու ճանապարհով ուղեցնում է սեփական թվաքանակը: Այս հոդվածն այսօր էլ պահում է իր գիտական արժեքն ու արժանահավատությունը:

Այսքանով չի սպառվում մեծ հայրենասերի ստեղծագործությունը: Սեյլանի կյանքն ու գործը քննող Հակոբ Պետրոսյանը, որ շնորհակալ գործ է կատարել, վկայում է, որ անհետացած գործերից բացի տպագրվել են գեղարվես-

տական երկեր, հողվածներ ազգագրական ուսումնասիրություններ, որոնք հարկ է դնել գիտական շրջանառության մեջ:

Մեր գրականության և ժողովրդի պատմության համար մեծ բարեբախտություն է Սեյլանի հանկարծակի հայտնությունը, նա գրչով մեկ անգամ և ընդմիջտ մեզ համար փրկել է մեր կորսված հայրենիքի պատմությունը, որի տված դասերն անհրաժեշտ են ոչ միայն մեր սերնդին:

***Քանալի բառեր** – մասնակցային, ներկայություն, ականատես, վկայագիր, բանահավաքչություն, ազգագրություն, մշակութային ճգնաժամ, պատմական ատաղձ*

СЕЙЛАН

В. Р. ГРИГОРЯН

*Доктор филологических наук, профессор,
заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ*

Сейлан-одна из самобытных фигур армянской литературы, чьи произведения долгое время были неизвестны читателю.

В 1877-78 гг. после Сан-Стефанского и Берлинского конгрессов возрос интерес к армянскому вопросу. Возникла необходимость представления страны Армении чужим. Он своими исследованиями и художественными произведениями решил эту задачу.

SEYLAN

V. R. GRIGORYAN

*Doctor of Philology, Professor,
Head of GSU Chair of the Armenian Language and Literature*

Seylan is one of the original representatives of the Armenian literature whose works were unknown to the readers for a long time. The interest towards "The Armenian Question" was provoked after the summits of San Stefano and Berlin, 1877-1878. It was necessary to represent the Armenian land precisely to the foreigners. He solved that problem through his investigations and literary works.